ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

01 դեկտեմբերի 2016թ.
թիվ

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝
պարոն Գ.Գյոզալյանին

Ձեզ ենք ուղարկում Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 01-ի ավագանու թիվ 28 որոշումը, համաձայն հավելվածի:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

ՈՐՈՇՈՒՄ

01-ը դեկտեմբերի 2016թ. N 28

ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ,10-րդ և 11-րդ հոդվածների պահանջով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել համայնքի տարածքում 2017թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել 18.11.2016թ. թիվ 22 որոշումը:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Ավետիքյան

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Զ.Մելիքյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
համայնքի ավագանու
2016թ. դեկտեմբերի 01-ի N 28 որոշման

ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3500 դրամ.

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ. Ղազարյան